



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հոկտեմբերի 2017 թվականի N 107-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 241-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին» N 241-Ա որոշման հավելված 10-ում «Առաքելյան Հասմիկ» բառերը փոխարինել «Սահակյան Մերի» բառերով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կից՝ ՀՀ Սյունիքի մարզի «Հրանտ Ոսկանյանի անվան Կապանի թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի խորհրդի 2017 թվականի հոկտեմբերի 2-ի գրությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ



Վ. ԿԱԿՈՒՅԱՆ

«02» հոկտեմբեր 2017թ.

ՀՀ Սյունիքի մարզպետ
պարոն Վ. Հակոբյանին


Հարգելի՛ պարոն Հակոբյան.

Հայտնում եմ Ձեզ, որ «Հրանտ Ոսկանյանի անվան Կապանի թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի կազմում տեղի է ունեցել անվանական փոփոխություն՝ համաձայն ՀՀ «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի:

Ծնողական խորհրդի անդամ Հասմիկ Առաքելյանը իր դիմումի համաձայն դուրս է եկել դպրոցական խորհրդի կազմից՝ դպրոցում սովորող չունենալու պատճառով:

Փակ գաղտնի քվեարկությամբ խորհրդի կազմում ընդգրկվել է ծնողական խորհրդի անդամ Մերի Սահակյանը:

Դպրոցական խորհրդի նախագահ՝ *Վ. Մանուկ* Ս. Միքայելյան



Քաղվածք

«Հրանտ Ոսկանյանի անվան Կապանի թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2017թ. սեպտեմբերի 29-ին ծնողական խորհրդի թիվ 01 նիստի արձանագրությունից

2017թ. սեպտեմբերի 29-ին «Հրանտ Ոսկանյանի անվան Կապանի թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում տեղի ունեցավ ծնողական խորհրդի նիստ, բոլոր անդամների մասնակցությամբ:


Օրակարգում՝

1. Դպրոցական խորհրդի անդամի փոփոխություն

Լսեցին – Ծնողական խորհրդի նախագահ Նունե Մարգարյանը ներկայացրեց Հասմիկ Առաքելյանի բնակության վայրի փոփոխության և դպրոցում սովորող չունենալու մասին: Այդ պատճառով անհրաժեշտ է ծնողական խորհրդից առաջադրել դպրոցական խորհրդի մեկ անդամ:

Արտահայտվեցին – Ց-րդ դասարանի ծնողական խորհրդի նախագահ Նարինե Մինասյանը առաջարկեց ծնող Մերի Սահակյանի թեկնածությունը, նշելով, որ նա բարեխիղճ ծնող է, բազմանդամ ընտանիքից է, բնակվում է Բարսեղյան թաղամասում և նվիրված է դպրոցին:

Որոշեցին – Փակ գաղտնի քվեարկությամբ «Հրանտ Ոսկանյանի անվան Կապանի թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ծնողական խորհրդի անդամ Մերի Սահակյանին առաջադրել դպրոցական խորհրդի անդամ՝ Հասմիկ Առաքելյանի փոխարեն:

Ծնողական խորհրդի նախագահ/  /Ա. Սողոմոնյան

«29» «սեպտեմբեր» 2017թ.